

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Անցյալ տարի Սովետական Միության սահմաններում և սփյուռքում հայտնաբերվեցին հայ գրականության և արվեստի երախտավորների մոր ձեռագրեր, փաստաթղթեր, որոնք եկան հանգրվանելու Հայաստանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի կամարների տակ և համալրելու վերջին հիսնամյակի ընթացքում այստեղ կենտրոնացված գանձերը, որոնք այսօր հիմք են ծառայում հայ մոր գրականության, թատրոնի և երաժշտության գործիչների թողած հարուստ մշակութային ժառանգության ուսումնասիրության, նրա գիտական ու մասսայական հրատարակության համար:

Տարվա ընթացքում թանգարան է մտել վեց հազար ձեռագիր ու լուսանկար, ինչպես և մշակութային գործիչներից մնացած անձնական օգտագործման իրեր, հազվագյուտ հրատարակություններ: Հովհաննես Թումանյանի և Հովհաննես Հովհաննիսյանի ժառանգները առհասկա պահպանության համար թանգարան են հանձնել մի շարք ստեղծագործությունների ինքնագրերը, առանձին երկերի տարբերակներ, նամակներ:

Թանգարանի արտասահմանյան բարեկամները աշխարհի տարբեր կողմերից ազգային թանգարան են ուղարկել Ավ. Իսահակյանի, Երվանդ Օտյանի, Տիգրան Կամսարականի, Վահան Թեքեյանի, Միքայել Կյուրճյանի, Արսեն Ղազիկյանի, Հովհաննես Աբելյանի, Սիրանուշի և այլոց ուշագրավ նամակներն ու ձեռագրերը, որոնք հարստացնում են մեր տվյալները տասնամյակներ առաջ ապարեզի վրա եղող մշակութային գործիչների և ընդհանրապես մշակույթի պատմության այդ շատ հետաքրքիր ժամանակի մասին:

Սփյուռքահայության հետ մշակութային

կապի կոմիտեի միջոցով թանգարան եկած ստամբուլահայ գրող Հակոբ Մեծուրիի արխիվը մի հաճելի անակնկալ եղավ սովետահայ բանասերների համար: Մինչև այժմ այդ գրողի մասին թանգարանում գրեթե մյուսեր չկային, մինչդեռ հետաքրքրությունը մեծ էր դեպի ինքնատիպ գրողը:

Դեկտեմբերի վերջերին մայրաքաղաքի գրական-գիտական հասարակայնության ներկայացուցիչների հավաքությամբ թանգարան հանձնվեցին Եղիշե Չարենցի մի շարք ձեռագրերը: Դրանք բանաստեղծի կենդանության օրոք ավանդ էին թողնվել նկարչուհի Ռեզինե Ղազարյանի մոտ: Հանձնված ձեռագրերի մեջ կա 26 ավարտուն բանաստեղծություն, տարբերակների հետ ընդամենը 2200 բանաստեղծ:

Արտասահմանից ստացված մյուսերի մեծ մասը բերել են թանգարանի ամերիկահայ և ֆրանսահայ բարեկամները: ԱՄՆ-ից բերված մյուսերի մեջ են Բենիամին Նուրիկյանի, Հակոբ Խաչմանյանի, Համաստեղի, ինչպես և դերասաններ Հովհ. Զարիֆյանի, Սերովբե Պենկյանի գործունեությանը վերաբերող վավերագրեր, բեմական զգեստներ: Ֆրանսիայից ստացվել է Կոմիտասի աշակերտուհի Աշա-նավոր երաժշտագետ Մարգարիտ Բաբայանի հարուստ մասնագիտական գրադարանը և արխիվը, որտեղ վավերագրեր կան Կոմիտասի, Արմենակ Ծափնուրայանի և ֆրանսահայ երաժշտական-մշակութային կյանքի մասին: Այդ հսկայական հավաքածուն Հայաստան է տեղափոխվել ֆրանսահայ մշակութային միության միջոցով՝ թանգարանի բարեկամ Ադասի Դարբինյանի ձեռքով:

Զգալապես աճել է նաև գրականության ու արվեստի գործիչների մասին ստեղծ-

ված հուշագրությունների հավաքածուն. նոր հուշեր են ստացվել Հովհ. Արելյանի, Արմենակ Ծաֆնուրադյանի, Արուս Ոսկանյանի, Լևոն Իսեցկու, Ակսել Բակունցի, Շուշանիկ Կուրդիմյանի մասին:

Գնալով մեծանում է օտար լեզուներով հայ հեղինակների երկերի թարգմանությունների հավաքածուն. Պարսկաստանից բանաստեղծ Դևի սիրալիր աջակցությամբ թանգարան են հասել Ալեք Խաչատրյանի պարսկերեն թարգմանությամբ հայ-բանաստեղծության ստվար անթոլոգիան, Բաֆու, Հ. Թումանյանի մի շարք երկերի պարսկերեն շքեղ հրատարակությունները: Չեխովովսկիայից հալագետ Լյուդմիլա Մոտալովան ուղարկել է իր թարգմանած Մկ. Արմենի «Հեղճար աղբյուրը»:

Հայտնի է, որ մեծ դերասան Պետրոս Ադամյանը միաժամանակ զբաղվել է նկարչությամբ և թողել է հոյակապ յուղաներկ գործեր: Դրանց մեծ մասը պահվում և ցուցադրվում է թանգարանի թատերական բաժնի ցուցահանդեսում. մեծ հետաքրքրությամբ են դիտվում նրա «Համլետ», «Օթելլո», «Արքա Լիր» և այլ գործերը: Հայտնի է, սակայն, որ Ադամյանի վրձնի այլ արտադրություններ պահվում են նաև արտասահմանյան թանգարաններում: Թանգարանի խնդրանքով Վիեննայի Միխթարյան միաբանության մատենադարանից ստացվել են Ադամյանի «Ինքնանկար» և «Մադոննա» գործերի լուսանկար պատճենները: Դա հնարավորություն կտա մասնագետներին ավելի լրիվ պատկերացում ունենալու և ճիշտ գնահատելու մեծ դերասանի նկարչական շնորհքը:

Հատուկ ուշադրության են արժանի ստացված հնատիպ գրքերը. դրանց մեջ են Վենետիկում տպված Միխթար Սեբաստացու «Գիրք քրիստոնեական վարդապետության» (աշխարհաբար) 1727 թ., «Ժամագիրք սրբուհույ կուսին Մարիամու» 1768 թ. և «Տաղարան փոքրիկ զանազան

գունով ասացեալ ի Պաղտասար Դպրէ» 1768 թ.: Այս գրքերից և ոչ մեկը մինչև այժմ չի եղել հանրապետության գրապահոցներում:

Ստացված նյութերի մեջ հետաքրքիր են բուլղարահայ գաղութի պատմությանը վերաբերող վավերագրերը:

Երկու տարի առաջ թանգարանը ստեղծեց ձայնադարան, որի գլխավոր նպատակն է սերունդներին փոխանցելու համար ձայնագրել և պահպանել գրողների և արվեստագետների կենդանի խոսքը: Այդ ուղղությամբ անցյալ տարի զգալի աշխատանք կատարվեց: Ձայնագրվել են մոտ քսան գործիչներ, այդ թվում՝ Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Ս. Բոչարյանը, Արամ Հայկազը (ԱՄՆ), Ստեփան Ծաֆազը (Եգիպտոս), Բյուզանդ Թոփալյանը (Ֆրանսիա) և այլն: Նախատեսվում է նույն կարգով ձայնագրել նաև այլ գործիչների, ինչպես և ժամանակի լավագույն ներկայացումների, արվեստի վարպետների առանձին մենախոսություններ և մեներգեր:

Թանգարանում մեծ աշխատանք է կատարվել գրական, թատերական և երաժշտական բաժնիներում կենտրոնացված ավելի քան կես միլիոն արխիվային վավերագրերի գիտատեխնիկական մշակման ուղղությամբ:

Միաժամանակ թանգարանը շարունակել է իր գիտահետազոտական աշխատանքները. հրատարակության է պատրաստել «Գրական ժառանգության» մատենաշարի 4 նոր հատորներ, որոնցից 1969-ին լույս է տեսել միայն մեկը՝ Ղևոնդ Ալիշանի նամականին 12 մամուլ ծավալով: Տպվել է երաժշտական բաժնի արխիվների ուղեցույցը, տպագրության է պատրաստվել թատերական բաժնի արխիվների ուղեցույցը:

Գ. ՄԱԴՈՅԱՆ

Թանգարանի գիտքարտուղար